

Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Աղեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավառյանի ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Արթուր Արմենի Վարդանյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Գյուղատնտեսական կոռպերատիվը՝ որպես գործարարական հարաբերությունների սուբյեկտ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է գյուղատնտեսական կոռպերատիվների իրավական կարգավորմանը: Սա շատ արդիական թեմա է, քանի որ գյուղատնտեսությունը ՀՀ-ում կարող է դառնալ երկրի տնտեսության հիմնական ոլորտներից մեկը՝ իր հետ բերելով համայնքների զարգացում, բնակչության կենսամակարդակի բարձրացում: Վերջին տարիների ընթացքում անընդհատ խոսվում է գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումների, գյուղատնտեսական հողերի խոշորացման, գյուղացիական կոռպերացիայի անհրաժեշտության մասին: Դրա հետ մեկտեղ որևէ էական բարեփոխում այս ոլորտում դեռ չի իրականացվել: Սա այն դեպքում, եթե պարենային անվտանգության ապահովումը երկրի հիմնական խնդիրներից է, իսկ գյուղատնտեսության արդյունավետությունը Հայաստանում շարունակում է մնալ շատ ցածր մակարդակի վրա:

Ակնհայտ է, որ անհատ գյուղացին, զուտ օբյեկտիվ պատճառներից ելնելով, չի կարող բարձրացնել գյուղատնտեսության արդյունավետությունը, այս ոլորտն իսկապես դարձնել

գիտելիքահենք և ժամանակակից: Այդ իսկ պատճառով պետության միջամտությունը, կառավարումը, ուղղորդումը, կարգավորումը կենսական նշանակություն ունի:

Հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն, այդ թվում՝ արտասահմանյան, բերվել են ուշագրավ տվյալներ: Հատկապես արժեքավոր է այն հանգամանքը, որ հեղինակը առաջարկվող կարգավորումները դուրս է բերել փաստացի տնտեսական և վիճակագրական տվյալներից: Իրավական հետազոտությունը միշտ ավելի արժեքավոր է, եթե այն հիմնվում է այդպիսի հետազոտությունների վրա:

Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևողյուններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Մասնավորապես, պարագրաֆ 1.1.-ում հեղինակը ուսումնասիրում է գյուղատնտեսական կոռպերատիվի հասկացությունը և առանձնահատկությունները: Այստեղ ներկայացված են գյուղատնտեսական կոռպերատիվի հասկացությունը, դրա նպատակները և առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, տարբերությունները ընկերություններից և ընկերակցություններից:

Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը հետազոտում է գյուղատնտեսական կոռպերատիվի տեսակները: Ի թիվս այլնի նկարագրվում է կոռպերատիվների հիմնական դասակարգումը՝ առևտրայինի և ոչ առևտրայինի: Այստեղ հեղինակը ներկայացնում է շատ կարևոր դրույթ, որ, ի տարբերություն սպառողական կոռպերատիվի, առևտրային կոռպերատիվի անդամները, ֆինանսական մասնակցությունից զատ, պետք է ունենան անձնական, աշխատանքային մասնակցություն կոռպերատիվի աշխատանքներում: Հեղինակը նաև իրավացիորեն քննադատում է ՀՀ օրենսդրության այս բացթողումը:

Արժեքավոր է նաև այն դիտարկումը, որ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը հնարավորություն չի տալիս կոռպերատիվներին իրականացնել ապահովագրական գործունեություն:

Պարագրաֆ 1.3.-ում հեղինակը ներկայացնում է կոռպերատիվների գործունեության սկզբունքները՝ բաց և ինքնակամ անդամություն, ժողովրդավարական կառավարում, անդամների տնտեսական մասնակցություն, ինքնակառավարում և անկախություն, կրթության,

վերապատրաստման և տեղեկատվության ապահովում, համագործակցություն և հոգատարությունը համայնքի հանդեպ: Այս պարագրաֆում ներկայացված են նաև այն սկզբունքները, որոնք գործում են ԱՄՆ-ում:

Պարագրաֆ 1.4-ում հեղինակը նկարագրում է գյուղատնտեսական կոռուպտատիվի գույքի և դրա ձևավորման միջոցներին վերաբերյալ հարցերը: Նշվում է, որ կոռուպտատիվի գույքի ձևավորման աղբյուրերն են սեփական և փոխառու միջոցները: Հեղինակը նշում է, որ սովորաբար տարբեր իրավական ակտեր նախատեսում են փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումներ: Դրա նպատակը կոռուպտատիվի անկախությունը և գույքային ինքնուրույնությունը պահպանելն է:

Փաստվում է, որ կոռուպտատիվի գույքի ձևավորման հիմնական աղբյուրը սեփական միջոցներն են, որոնք ձևավորվում են պարտադիր, լրացուցիչ և կամավոր փայավճարներից:

Պարագրաֆ 2.1.-ում նկարագրվում է գյուղատնտեսական կոռուպտատիվի անդամի կարգավիճակը: Նշվում է, որ իրավաբանական անձինք կարող են լինել միայն սպառողական կոռուպտատիվի անդամ, իսկ ֆիզիկական անձինք և՝ սպառողական, և՝ առևտրային կոռուպտատիվի անդամ:

Այստեղ հեղինակն ավելի մանրամասն ներկայացնում է առևտրային կոռուպտատիվում անդամի աշխատանքային մասնակցության հարցը՝ իրավացիորեն նշելով, որ դա կոռուպտատիվի անդամի իրավունք-պարտականությունն է: Հեղինակը նաև նկարագրում է կոռուպտատիվի անդամի և կոռուպտատիվի աշխատանքային հարաբերությունների կարգավորման հարցը և տալիս է բավականին արժեքավոր լուծումներ:

Պարագրաֆ 2.2.-ում մասնակցությունը գյուղատնտեսական կոռուպտատիվին ներկայացվում է որպես գործարարական գործունեությամբ զբաղվելու արդյունավետ միջոց: Այստեղ նկարագրվում է նաև ներդրող անդամի իրավական կարգավիճակը, դրա նշանակությունը, կարգավորման առաջարկվող կառուցակարգերը:

Պարագրաֆ 2.3.-ում հեղինակն ուսումնասիրում է կոռուպտատիվի կառավարման մարմինները և դրանց առանձնահատկությունները: Նկարագրվում են կոռուպտատիվի կամքը ձևավորող և կամքը արտահայտող մարմինները: Առաջարկվում է կարգավորել կոռուպտատիվի գործադիր մարմնի, դիտորդ խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և վերստուգողի

պատասխանատվության հարցը: Սա արժեքավոր առաջարկություն է, քանի որ գործող օրենսդրությունն այդ հարցը չի կարգավորում:

Պարագրաֆ 3.1.-ում ներկայացված է կոռապերացիայի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Այստեղ հեղինակը բերում է շատ կարևոր վիճակագրական տվյալներ, ներկայացնում է առկա խնդիրները, ՀՀ կառավարության՝ նախկինում կատարած քայլերը, դրանց արդյունքները, կոռապերացիայի դերն այդ խնդիրների լուծման հարցում:

Պարագրաֆ 3.2.-ում հեղինակը նկարագրում է կոնտակտացման պայմանագիրը՝ որպես կոռապերացիայի աջակցության գործիք: Ներկայացվում է այս պայմանագրի նշանակությունը, անհրաժեշտությունը, զարգացման պատմությունը: Իրավացիորեն նշվում է, որ կոնտրակտացման պայմանագրով վաճառողը պետք է պատասխանատվություն կրի միայն մեղքի առկայության դեպքում՝ ի տարբերություն զնորդի, որը պատասխանատվություն է կրում անկախ մեղքի առկայությունից: Այսպիսի կարգավորման օրենսդրական ամրագրումը լրջազույն երաշխիք է գյուղատնտեսի համար, որպեսզի վերջինս զերծ մնա իր արտադրանքի պատահական կորստի ռեսլերից, որը կախված կլինի բնակլիմայական և այլ, իրենից չկախված պայմաններից:

Պարագրաֆ 3.3.-ում պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը ներկայացվում է որպես գյուղատնտեսական կոռապերատիվների օժանդակության հիմնական միջոց: Նկարագրվում է գյուղատնտեսության դերը ՀՀ տնտեսության մեջ, իրավական կարգավորման համար կարևոր դրա հիմնական բնութագրիչները: Նկարագրվում են գյուղատնտեսական կոռապերատիվներին տրվող ֆինանսական աջակցության ձևերը, միջոցները, դրանց նշանակությունը:

Պարագրաֆ 3.4. նկարագրվում է հողային բարեփոխումների անհրաժեշտությունը կոռապերացիայի աջակցության գործում: Նշվում են գյուղատնտեսության ոլորտում հիմնական խնդիրները, դրանց լուծման ուղիները, այդ հարցում կոռապերացիայի նշանակությունը:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ կիրառելով ճիշտ մեթոդաբանություն, օգտագործելով տեսական, պրակտիկ լայնածավալ նյութեր: Ատենախոսության հիմնական

դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված յոթ գիտական հոդվածներում։ Սեղմագիրը արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին։

Այնուամենայնիվ, կարծում եմ, ինչպես ցանկացած հետազոտության, այնպես էլ սույն ատենախոսության մեջ ևս առկա են առանձին վիճելի եզրակացություններ։ Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց։

1. Աշխատանքն ունի բավականին արժեքավոր եզրահանգումներ և առաջարկներ։ Սակայն հաճախ հեղինակը չափից դուրս մեծ ուշադրություն է դարձնում ոչ միայն այդ առաջարկների ձևակերպմանը, այլև համապատասխան տերմինների, հասկացությունների օրենսդրական ձևակերպմանը։ Իհարկե, կոնկրետ տերմինի սահմանումը շատ կարևոր է օրենսդրական կարգավորման համար, բայց պետք է նաև հիշել, որ դրանք հաճախ կարող են հակառակ ազդեցություն թողնել՝ ծանրացնելով կարգավորումը, դարձնելով այն ոչ ճկուն։ Պետք է գտնել ճիշտ հարաբերություն՝ սահմանելով օրենսդրական հասկացություններ միայն այն դեպքում, եթե դա ծայրահեղ անհրաժեշտ է՝ մնացած դեպքերում թողնելով այդ հարցի հետագա զարգացումը պրակտիկային և տեսական գրականությանը։

2. Պարագրաֆ 2.2.-ում հեղինակն առաջարկում է փոփոխել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի խմբագրությունը և շարադրել այդ հոդվածն այսպես՝ «Զեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ոփոկով, պարբերաբար իրականացվող գործունեությունը, որը հետապնդում է գույքն օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց, ծառայութուններ մատուցելուց շահույթ ստանալու նպատակ»՝ ավելացնելով նշում այն մասին, որ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ է, որ համապատասխան գործունեությունը լինի պարբերաբար իրականացվող։

Անհրաժեշտ է հասկանալ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում տրված «Զեռնարկատիրական գործունեության» սահմանումը նպատակ ունի հիմնականում սահմանելու ձեռնարկատիրական պայմանագրերի առանձնահատկությունը և որպես դրա հետևանք քաղաքացիական պատասխանատվության հարցը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 26

կետ 4, հոդված 417 կետ 3): Այսինքն, այդ հոդվածում նշված սահմանումը կարգավորում է հիմնականում մասնավոր հարաբերություններ, որոնց հիմնական նպատակը մասնավոր շահի պաշտպանությունն է: Այս տեսակետից, համապատասխան ձեռնարկատիրական գործարքով կողմի համար նշանակություն չունի՝ արդյոք իր կոնտրագենտը համապատասխան գործունեությունն իրականացնում է պարբերաբար, թե ոչ: Կարևոր է զուտ այն փաստը, որ այդ գործարքով վերջինս շահույթ ստանալու նպատակ ունի և գործում է ինքնուրույն իր ռիսկով: Եթե սահմանավի պարբերականության չափանիշը, կստացվի, որ այդպիսի անձի հետ առաջին գործարք կնքած կողմն ավելի վատթար դրության մեջ կհայտնվի, որովհետև այդ հարաբերության նկատմամբ չի կիրառվի ձեռնարկատիրոջ պատասխանատվության վերաբերյալ կարգավորումը:

Այլ է իրավիճակը հարկային, հանրային ծառայության և հանրային բնույթ ունեցող այլ հարաբերությունների դեպքում: Այստեղ, իսկապես, օրինակ հարկային պատասխանատվության հարցը լուծելիս, պետք է գնահատել՝ արդյոք կոնկրետ անձը պարբերաբար է իրականացնում համապատասխան գործունեությունը, թե ոչ:

3. Էջ 81-ում հեղինակն առաջարկում է առևտրային կոռպերատիվներում անդամներին վճարվող կոռպերատիվ վճարը բաշխել ըստ նրանց աշխատանքային մասնակցության, հետևյալ համամասնությամբ՝ 50 տոկոս ուղղվում է փայի արժեքի ավելացմանը, 50 տոկոս վճարվում է անդամին: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով հեղինակի հետ՝ կարծում եմ պետք է թողնել այս հարցի հետագա կարգավորումը կոռպերատիվի կանոնադրությանը՝ օրենքով տալով զուտ վերին/ստորին շեմեր:

4. Պարագրաֆ 3.3.-ում դիտորդ խորհուրդի նկարագրությունն ընդգրկված է կոռպերատիվի կամքն արտահայտող մարմինների հետազոտությանը նվիրված հատվածում: Կարծում եմ, դիտորդ խորհուրդը չի հանդիսանում կամք արտահայտող մարմին, և վերջինիս նկարագրությունը չպետք է կատարվեր այս հատվածում:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են բանավիճային բնույթ, որոնց քննարկումները տեսության մեջ դեռ վատահաբար կշարունակվեն, էական չեն և ամենափափառ չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոզրյալը՝ գտնում եմ, որ Արթուր Արմենի Վարդանյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Գյուղատնտեսական կոռպերատիվը՝ որպես գործարարական հարաբերությունների սուբյեկտ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐՈՒԹՅՈՒՆ


Ա.Ա.Թափառյան

Դոցենտ, ի.գ.թ.

13.12.2021թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արտեն Աշոտի Թափառյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ, իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր՝



Հ.Ա. Խաչիկյան